


Տ. Կառավարչապետին Բարձրագոյն թողրու-
ութիւն դպիր Սարգիս Բամաղանցին՝ Գեր-
մանիա գնալու և ուսումն շարունակելու հա-
մար:



Կ Ր Ր Ն Ա Կ Ա Ն — Բ Ա Փ Ի Ն

Ե Յ Ք Ե Ր Ո Ր Գ Պ Ա Տ ՈՒ Ի Ր Ա Ն Ը .

«Աւարտի գի սասցաւ՝ մի շնար. բայց ես
սակտ մեզ, յի ամենայն որ հայի ի կիև մարդ
առ ի ցանկանայոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ
նմա ի արտի խրով»:

Մատթ. Ե. 27. 28:

ԱՉՔԻՍ առաջ կենդանի է դեռ իմ
ուսուցչն (ներկայումս հաշակ ունե-
ցող մի բարձրաստիճան եկեղեցականի) կեր-
պարանքը սրբազան պատմութեան դասինս կեր-
նա այս պատուիրանին հասնելով՝ լուսութեամբ
անցաւ և յաջորդից շարունակեց: Այն ժա-
մանակ ես իմ պատանեկական ըմբռնմամբ
գոհ մնացի, որչափ յիշում եմս այդ վար-
մունքից, և այժմ կրք մտածում եմ՝ գա-
տապարտել կրկին չեմ՝ կարող: Երբաւի ոչ
միայն երեխաների այլ նաև հասակաւոր մար-
դոց առաջ այս նուրբ խնդիրը շօշափելը խիստ
պատասխանատու գործ է, և ով խորին լըր-
ջութեամբ և ահուգողով չի խօսում այս
մասին, աւետարանական գաղափարի ահա որ
ճշմարտութեամբ չի զգածուած և սիրտը լի
չէ նորա պահանջած սրբութեամբ՝ աւելի
գայթակղութիւն պատճառել քան բարերար
ազդեցութիւն գործել կարող է: Արդէն ամօ-
թի բնածին զգացումը մեզ ասում է, որ
լռելն ու ծածկելն այստեղ անհրաժեշտ մի-
ջոց է յաճախ վտանգի առաջն առնելու
համար: Եթէ կարելի լինէր մանաւանդ
մանուկների կրթութիւնն այնպէս տանել, որ
նորա ժամանակից առաջ ամենեկին չճանօթա-

նան զգայական ցանկութիւնների դէպի ապակա-
նութեան անդունդը ձգող գաղանիքների հետ՝
անչափ մեծ ծառայութիւն մատուցուած կլինէր
մարդկութեան: Սակայն դժբաղդաբար մեր ըն-
տանեկան և հասարակական կեանքն այնպէս է
կազմակերպուած, մեզ շրջապատող աշխարհն
այնքան բազմակողմանի միջոյններ ունի յիշեալ
գաղանիքները բանալու, որ մենք վայ թէ ուշ
ստիպուած պէտք է լինինք հաշիւ տեսնել նոցա
հետ. ծածկելն ու լռելն ուրեմն խորհուրդ
չէր ունենայ կրկին. պէտք է խօսենք, պէտք
է մտածենք ու քննենք, թէ ս. աւետարանն
ինչ ոյժի ինչ զէնքեր է տալիս մեր ձեռքը՝
անարատին պաշտպանելու և անկեալին կրկին
օտքի կանգնեցնելու համար:—Մի հարեանցի
ակնարկ այն մեծամեծ փոփոխութիւնների վե-
րայ, որոնք վերջին մի քանի տասնեակ տա-
րիների ընթացքում յառաջ են եկել հայկա-
կան ընտանիքի մաքուր կենցաղի՝ բարձր ու
ստորին շրջանների ամէն տեսակ մարդոց բա-
րոյտեան հայեցողութեան մէջ, մի ակնարկ
այն մոլի կենցաղի վերայ, որ աշխարհ ելած
երիտասարդութիւնն է, վարումս այն բոլոր
փորձութիւնների վերայ, որոնց ենթակայ են
փողոցներում թափառող մանուկները՝ բաւա-
կան է մեզ համոզելու, որ այստեղ շատ նիւթ
կայ յիրաւի լուրջ խորհրդածութիւնների
համար և Աստուածային պատուիրանը ոչ մի-
այն զանց անել պէտք չէ, այլ անհրաժեշտ է
ընդհակառակն միշտ աչքի առաջ ունենալ
միշտ կրկնել և արծարծել:

Արդ, ինչպիսի՞ պահանջներ է գնում մեր
առաջ Աստուծոյ պատուիրանը: «Մի շնար»...
շատ ընդհանուր գործուած է այդ և կարող է
զանազան բացատրութիւններ վերցնել, Հրէից
օրէնքը բացատրում է այնպէս, որ արգելուած
է լինում միայն ուրիշի ընտանեկան սրբու-
թիւնն արատաւորելը. այր և կին Աստու-
ծոյ օրէնքի համաձայն ամուսնական սուրբ
կապով միացած են իրար հետ. քակել այդ
կապը ամուսնացած կնոջ անհաւատարիմ
դարձնելով՝ ընտանեկան բարոյական կեանքի
կապը քակել և ուղղակի Աստուծոյ օրէնքի
դէմ մեղանշել է, ուստի և անդի պէտք է
չունենայ Սակայն յայտնի է, որ արտաքին
գործողութիւններ արգելելով կարելի չէ բա-

րոյական կեանք պահպանելու մինչև սա իւր կայանը զգացմունքներն և ներքին հոգեկան խորհուրդներն աշխարհումն ունի և ոչ թէ դուրսը՝ նիւթեղէն աշխարհում մարդոց այսպէս կամ այնպէս գործելու եղանակի մէջ։ Իրաւ է անբարոյական գործը զգացմունքից կամ խորհուրդից նորանով տարբերուում է, որ միայն գործողին չէ մնասուամ այլ նաև այդ գործի մէջ մասնակցող օտարին, բայց անբարոյական դարձնողը և անբարոյականութեան չափը որոշողը կրկին հոգեկան աշխարհի մէջ տեղի ունեցած շարժումներն են և ոչ թէ հրապարակ ելած գործողութիւնները։ Ուստի և Փրկիչը Աստուծոյ պատուիրանին իւր իսկական ընդարձակ նշանակութիւնը տալու համար՝ այդ ներքին աշխարհն է փոխադրում հարցը և այդպէս պարզում թէ ի՞նչ է շնութիւնը և ինչպէ՞ս պէտք է դէմ դնել նորան։ «Ամէն ոք, որ նայում է մի կնոջ ցանկութեան մասը՝ արդէն շնացաւ նորա հետ իւր սրտում»։ Խնդիրն այստեղ այն չէ, այլևս, թէ ինչպիսի՞ կին է դա, ի՞նչ չափով ենթարկուում է ցանկութեան և ի՞նչ հետեանքներ են յառաջ գալիս՝ բաւական է որ ցանկութիւնը կայ և ահա շնութիւնն սկսուած է— այն պիղծ ցանկութիւնը, որ Աստուծոյ պատկեր մարդուն բարոյական բարձրութիւնից ձգում անբան անասունների հաւասար է դարձնում։ որ ստիպում է իւր նման Աստուծոյ պատկեր արարածի վերայ, իբրև իւր անարգ կրքերին յազուրդ տուող մի մեքենայի վերայ նայել և Աստուծոյ օրէնքի՝ ամուսնական բնական սիրոյ օրէնքի դէմ մեղանշել, ոչ միայն նորա հակառակը գործելով, այլ նորա իմաստը խեղաթիւրելով, և ամէն տեսակ մութութիւնների ու ապականութեան աղբիւր դարձնելով այն, ինչ որ ընտանիքի և ամբողջ ազգութեանց բարոյական երջանիկ կենցաղավարութեան աղբիւր և հիմք պէտք է լինէր։

Այդպէս չէ՞ միթէ, ակներև չէ՞ ամէնքիս համար, որ անպայման արդար է Փրկչի դատաւճիւրը։ Ո՞վ է, որ բարոյական զգացման մի նշոյլ անգամ պահած լինի իւր սրտում և չխոստովանի, թէ յիրաւի այնտեղ ներսը ցանկութիւններ են շարժում երբեմն, որոնց մէջ ապականութեան ահագին ձահիժ կայ

ամփոփուած, թէ մարդու իւրաքանչիւր հայեացքն այդ դէպքում թոյն է, որ ժանտախտի նման շուրջը տարածուել շատ շատերին վարակել կարող է, իսկ ինքը՝ այդպէս վարակուած ու իւր զգայական ցանկութիւններին գերի դարձած մարդը՝ այնչափ ստոր է արդէն և անկեալ, որ աւելի ընկնել հազիւ թէ կարելի կլինի։ Բայց ինչպէ՞ս ենք նայում մենք այդպէս ստորացած մարդու վերայ, ինչպէ՞ս ենք վերաբերուում դէպի նորա այդչափ ստորացնող ցանկութիւնները՝ տալիս ենք նոցա իրենց իսկական անունը և զգուում նոցանից, զգուում ինքներս մեզնից, որ մեր վսեմ կոչման հակառակ ստորանալ և նոցա գերին դառնալ կարող ենք. ոչ, մենք նոցա գեղեցիկ բանաստեղծական անուններ ենք տալիս՝ շոյում փայփայում, սնուցանում ենք, և հաւատացնում ինքներս մեզ, թէ այդ ամէնը բնական է, այդպէս էլ պէտք է լինի՝ ուրիշ կերպ լինել չի կարող. և երբ հետզհետ, յառաջ գնալով թաղուում ընկղմում ենք ապականութեան ձահիժ մէջ, անխուսափելի անկումն ու կորուստ տեսնում աչքի առաջ՝ փոխանակ Պօղոս առաքեալի նման բացականչելու. «Այլ մի տառապեալ եմ ես, ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի մահու» և Աստուծոյ շնորհաց աւետարանի մէջ փրկութիւն որոնելու ինքնամոռացութեան ենք տալիս մեզ և հաճոյքով դէպի անդունդ լողում, աշխատում ուրիշներին ևս քաշ տալ մեր ետեւից։

Իսկ ի՞նչ է ասում փրկութեան աւետարանը. «եթէ քո աջ աչքը քեզ գայթակեցնում է՝ դուրս քաշիր ու դէն ձգիր. որովհետև քեզ աւելի օգուտ է, որ անդամներիցը մէկը կորչի, ու բոլոր մարմինդ գեհէն չը ձգուի»։ այդպէս անողոր լինել սեփական սնձի նկատմամբ սովորեցնում է այն Զրիատոս, որ օտարի նկատմամբ եօթանասնեկին եօթն անգամ ներել էր պատուիրում և ներեց ինքը շնացող կնոջ։ Միտա լինել և արթնութեամբ հսկել հոգեոյ բոլոր շարժումների վերայ, թոյլ չտալ երբէք, որ մի տեղի զգացում կամ մի անիրաւ միտք հանդէս գայ ու ձարակ գտնէ այնտեղ, բայց եթէ մի անգամ մեղկացել և թոյլ ենք տուել, որ շատ այդպիսիները կուտակուին և մի հիւսնդոտ պալար կալ-

մեն՝ զգաստութեան բուսելին քաջութիւն ունենալ կարելու և դէն ձգելու այդ պարբը թէկուզ աչքից աւելի թանկագին դարձած լինէր նա մեզ համար, և կարելիս անասելիցու երզգայինք, համարելիք թէ մեր կեանքի կէսը հետը կարուում է — ահա Քրիստոսի աւետարանի պահանջը: Բայց ինչո՞ւ այնչափ ծանր գրեթէ անիրագործելի է երևում մեզ այդ պահանջը: Յամենայն դեպս ո՞չ նորա համար միայն որ բնական կարիքը բռնութիւն է գործ դնում մեզ վերայ և հակառակ մեր կամքի ցանկութիւններ յառաջ բերում մեր մէջ. յայտնի է որ բնական կարիքը շատ աւելի սահմանափակ է, քան թէ գործադրութիւն է գանում աշխարհում, և եթէ իւր բնական սահմաններից չեղնէր՝ մարդկութիւնն ազատ կմտար անբարոյականութեան այն տղմից, որի մէջ ընկզմած է այժմ ամբողջովին: Բնականը երևակայութեան ուժով, այլ և այլ թիւր և փշացած զաղափարների ազդեցութեան ներքոյ անբնական դարձեցուց յետոյ է, որ մենք ազատ կամօք գուռն ենք բաց անում չարեաց առաջ: Ինչպէս սովորաբար, այնպէս և այս դեպքում մենք պարզ կերպով չենք գիտակցում թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի զաղափարի ոյժը, մեր այս կամ այն կերպ մտածելը, այս կամ այն համոզումն ունենալը մեր յարարելութեանց, մի որևէ իրի մասին՝ մինչդեռ գորանից շատ բան է կախուած: Բոլորովին տարբեր է, երբ մենք սպրում ենք մի այնպիսի հասարակութեան աշխարհայեցողութեամբ, որ իւր անսանձ կրքերին անձնատուր լինելը մեզք չէ համարում որ ամենակաթի հեշտասիրութիւնն ու ամենախայտառակ յանցանքներն այս նկատմամբ ներել և աչքի տակից անցկացնել պատրաստ է, — և տարբեր, երբ մենք կատարեալ համոզմունքով աւետարանի հայեցողութեանն ենք հետևում:

«Ամէն ոք, որ իւր կնոջն արձակում է, բացի պոռնկութեան դեպքից՝ նորան շնանալու միջոց է տալիս, և ով արձակուածին կնութեան է առնում շնանում է», այս խօսքերի մէջ ամփոփուած է, որոշ չափով աւետարանի հայեցողութիւնը, իսկ ուրիշ դեպքերում Քրիստոս աւելի է պարզաբա-

նել և հաստատուն հիմունքների վերայ դրել նոյն գաղափարը: Մարկոսի աւետարանի մէջ «առանց բանի պոռնկութեան» խօսքերն անգամ չկան. ամուսնութեան անլուծանելի լինելու սկզբունքն այստեղ առանց որ և է պայմանով սահմանափակելու է ներկայացրած, և իրրե հաւատարագոր մարդու թէ կնոջ վերաբերմամբ: Յիրաւի պոռնկութեան հանգամանքը սկզբունքի համար սահման չէ գնում, այլ միայն մի կողմնակի բացատրութիւն է տալիս, թէ ինչ դեպքում ամուսնութիւնն ամուսնութիւն չէ, այլ և սկզբունքը բացարձակ է՝ նորա համաձայն հաստատած կապը Աստուծոյ հաստատած պէտք է համարուել, և ոչ ոք չպէտք է համարձակուել քակել այն. պոռնկոյ ամուսինը քակել է արդէն այդ կապը, միևնոյն է այնուհետև օրէնքը կվաւերացնէ՝ արդեօք եղած բովանդակութեամբ, թէ ոչ: Ով սկզբունքի մասին է խօսում՝ նա չի կարող հաշուի առնել, թէ ինչ է կատարուում իրական աշխարհում, այլ ի նկատի ունի այն միայն, ինչ որ ըստ զաղափարականին պէտք է լինել, իսկ զաղափարականն այն է, որ մի այրը միայն մի կին ձանաչէ և ամուսնական կեանքը նոցա մէջ այնպիսի վեհ սիրով կնքուած լինի, որ ամուսիններից իւրաքանչիւրն այդ կնիքը քակելը աներևակայելի բան համարել: Ինչչիցն է կրկին, որ իրական կեանքը չի համապատասխանում այդ զաղափարին և կարծես ներկայ ժամանակում աւելի և աւելի անհամապատասխան է գտնուում: Ո՛չ անշուշտ նորանից, որ զաղափարն ըստ ինքեան սխալ է և անիրագործելի, այլ որ ժամանակակից հասարակութեան համոզմունքների վերայ նա չի իշխում, որ այստեղ ուրիշ զանազան զաղափարներ ու համոզմունքներ են յառաջ եկել և իրենց շլացուցիչ փայլով մթնացնում են ու ծածկում իսկական զաղափարի լոյսը:

Գաղափարը պահանջում է, որ մի անգամ ընդ միշտ Աստուծոյ օրէնքով միմեանց հետ զուգուած ամուսինները անբաժան լինին և հաւատարիմ կամ որ իւրաքանչիւր երիտասարդ և աղջիկ իւր մօտիկ տղզականի հետ ունեցած ազգակցական կապն անփոխարինելի համարէ, մի անգամ նորա վերայ իրրե եղբոր կամ քրոջ, կամ հօր կամ մօր վերայ նա-

յիւրոց յիտոյ՝ ուրիշ կերպ նայելն իրրե յանցանք նկատւ. բայց մենք ասում ենք, երբ որ այդ ամուսիններից մէկը մի օտար կնոջ կամ մօրգու՝ այդ երիտասարդներից մէկը իւր ազգականին նայում է «առ ի ցանկանալոյ նմա», իրաւունք պէտք է ունենայ իւր կրքին անձնատուր լինել, քակել արգէն եղած անբախտելի բարոյական կապը և մի նորը հաստատել՝ որ ուրեմն այլ ևս բարոյական լինել չի կարող մինչ մենք բարոյական պատկեր ենք տալիս նորան՝ «սիրոյ» սրբազան անուան ներքոյ ծածկելով և այդպէս բարոյականի ու անբարոյականի գաղափարներն իրար հետ շփոթում: Առաքեալի ահա որ խօսերը (Ա. Կորնթ. Զ. 16) միտ չենք բերում մենք ամենեին, և ըստեղծում ենք մի թշուառ բարոյապիտու թիւն, որի հայեացքները ժողովրդի այլ և այլ խաւերի մէջ թափանցելով՝ ողջախոհ օւանդութեան ամբարցած բոլոր կապերը քակում և սանձարձակ ազատութիւն են շնորհում մարդոց ամենարատար կրքերին և ի՛նչ է հետեւանքը: Հետեւանքն արգէն իսկ զարհուրելի է. բայց աւելի ևս զարհուրելի պէտք է լինի ապաւայում, եթէ չզղաստանանք, եթէ զանազան կեղծ ու պատիր պատճառանքներով մեր զգայական ցանկութիւնները շոյելուց և ինչ որ կարծեցեալ ազատութեան փայլուն պատկերների ներքոյ ծածկելուց չդադարենք. եթէ մեր ողջախոհ նախնեաց առաքինութիւնը չփերականգնենք՝ ս. աւետարանից բղխած ս. գաղափարները մեր բարոյական կեանքի ամենօրեայ անունզը դարձնելով և պատրաստ գանուելով ամէն լոպէքրիտանէական արիութեամբ իւրելու մեր սրտից ու սրբելու ստքի տակ մեզ գայթակղութիւն պատճառող զգացումներն ու խորհուրդները:



Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

ԵՒ

ԱՂ. ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ,

Գ.

ԱՂ. ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒ ԲՈՊԱՅՈՒՄ.

Ի.

Նէր ին՝ առաւելո՞ւն ինն և քրիստոնէական քարէ-
փորձո՞ւն ինն:

(Շ ա ռ ու ն ա կ ու թ ի լ ճ) *

Յիսունական թուականներից սկսած ներքին առաքելութեան և ընդհանրապէս կենդանի քրիստոնէութեան գործը Եւրոպայում հսկայական յառաջադիմութիւններ է անում: Թէ բողոքական և թէ կաթոլիկ եկեղեցիների համար ներքին առաքելութիւնը եկեղեցական կեանքի խոշոր գծերից մէկն է. նա այնքան ընդարձակ է, որ բոլոր հաստատութիւնների և գործունէութիւնների մասին տեղեկութիւն տալու համար մի ամբողջ գիրք պէտք է գրել: Համարարաններում գաստիստութիւններ են կարգում ներքին առաքելութեան մասին. գործնական աստուածաբանութեան ձեւերից մէկն է նա և հարուստ գիտնական գրականութիւն ունի: Մինչև իսկ առաջնորդութեան համար ձեռնարկներ կան գրուած, և լաւագոյններից մէկը յօդուածիս ընթացքում յիշուած Շ. Կերի գիրքն է:

Ներքին առաքելութեան ձեւեր կան Գերմանիայի բոլոր նշանաւոր քաղաքներում: Իւրաքանչիւր նահանգական քաղաք ներքին առաքելութեան հաստատութիւնների և գործունէութեան կեդրոն է, անկախ միւսներից: Բայց այդ անկախ ընկերութիւնները միացած են բարոյական սերտ կապերով՝ որոնց մասին յիշեցինք նախընթաց հաստատածի մէջ: Նշանաւոր հաստատութիւններ կան և կեդրոնական մեծ քաղաքներից հեռու, ինչպէս Բիլիֆելդի մօտ եղած նշանաւոր հաստատութիւնները՝ պաստոր Փոն Բոգելզվինգի տեսչութեամբ, և Նէինշաէր գիւղինը՝ Հայց լեռներում: Բայց մեծ քաղաքներին յատուկ են քաղաքային

* Տես «Արարաց» 1898 թ. հունիսի Ե. կր. 239: